# Քրիստոնյա Հայաստան

2006, ՕԳՈՍՏՈՍ Ա, ԹԻՎ 15 (227)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


**ԳԷՈՐԳ Զ ՉՈՐԷՔՉԵԱՆ**

**կաթողիկոս Ամենայն հայոց**
**(ծն. 1868, կթղ. 1945-1954)**

## ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ՆԻՒԹԱԿԱՆ ՇՆՈՐՀ
## (Աստուածածնի վերափոխման տօն)

«Աչք ամենեցուն ի Քեզ յուսան, եւ Դու տաս կերակուր նոցա ի ժամու» *(Սաղմ. ՃԽԴ 15)*

Ա

ա) Ի՜նչ գեղեցիկ եւ հաճելի պատկեր է զարթեցնում մեր մէջ այս սաղմոսը: Մեր յիշողութեան մէջ վերակենդանանում են մեր մանկութեան քաղցր օրերը, երբ մենք՝ փոքրիկներս, մեծերի հետ միեւնոյն սեղանի շուրջն էինք բազմում: Սեղանի գլխին բազմած էր լինում ընտանիքի հայրը, միւս ծայրին՝ ընտանիքի մայրը, որ բաշխում էր մեզ՝ սեղանի շուրջը խմբուած փոքրիկներիս, անուշահամ կերակուրներ:

Լարուած ուշադրութեամբ, աչքերս յառած, նայում էինք նրան եւ հետեւում նրա շարժումներին՝ փոքրիկ ձեռներիս բռնած պատառաքաղ կամ դգալ: Բաշխումը սկսւում էր փոքրիկներից (մեծերը պարտաւոր էին համբերութեան օրինակ տալ), եւ կարգով ստանում էր իւրաքանչիւրը իւր բաժինը ժամանակին, ու սկսւում ուրախ ճաշը:



Պատահում էր, որ մանուկներից ոմանց ագահ աչքերը դժգոհ էին մնում մօր արդարադատութիւնից, սակայն ի վերջոյ իւրաքանչիւրն էլ գոհ եւ կուշտ ելնում էր սեղանից՝ փառք տալով Արարչին:

Ով ձեզնից, սիրելի ծնողներ, ունի միշտ իւր սեղանակից բազմաթիւ այսպիսի քաղցած հիւրեր, նրան հասկանալի է այս պատկերը, եւ թէեւ ամէն օր նոյն գործը կատարելը կապուած է հոգսերի ու նեղութեան հետ, սակայն հաճութեամբ է կատարւում, քանի որ հէնց այդ հոգսերն ու նեղութիւններն են ուրախութեան ու երջանկութեան անսպառ աղբիւր դառնում ծնողների համար:

բ) Ճիշտ նոյն հոգսն է, որ ծանրանում է մեր երկնաւոր Հօր վրայ, եւ նոյն ուրախութիւնն է, որ զգում է նաեւ մեր երկնաւոր Հայրը: Ամէն կենդանի շունչ կարօտում է Նրա խնամող ձեռին. այնտեղ, ուր շնչում են քամիները եւ սահում-գնում ամպերը, աստուածային սեղան է պատրաստուած, որի շուրջը հաւաքւում են անթիւ-անհամար բազմականներ:

Նա հոգում է ամենափոքր մժղուկների մասին, որոնք արեւի լոյսի մէջ պարում ու ցնծում են. Նա ականջ է դնում ագռաւների աղերսական խռպոտ ձայնին. Նա լսում է քաղցած առիւծի հուժկու մռունչը: Ինչպէ՞ս կարող է ուրեմն Իւր որդիների աղօթքը չլսել, որ միշտ աղերսում են. «Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր»:

Ինչպէս միշտ, նոյնպէս եւ այս տարի Նա հոգացել է մեր տարեկան պաշարը՝ տալով առատ անձրեւ, կենդանարար արեւ եւ սոցա հետեւանք առատ հունձ, ու մեր սիրտը լցրել ուրախութեամբ: Եւ այդ է պատճառը, որ այսօր բոլորս ուրախ ու զուարթ կանգնել ենք Նրա առաջ եւ մեր գոհութիւնը յայտնում Իւր հայրական խնամքի եւ դէպի մեզ ունեցած անփոփոխ հաւատարմութեան համար: Սակայն մենք եւս միշտ հաւատարի՞մ ենք Նրան:

գ) Եղել են տարիներ, երբ մեզ թուացել է, թէ Աստուած պիտի զլանայ Իւր հայրական խնամքը. տաք եւ չոր ամառ, հարաւի պարզկայ ամպազուրկ երկինք, եւ եթէ երբեմն ամպի կտոր երեւացել է երկնակամարի վրայ, ցրուել ու անցել է առանց յագեցնելու մեր դաշտերի անյագ ծարաւը: Ինչպիսի՜ տխուր զգացմունքներով եւ խոհերով անցել ենք մենք յաճախ այդ դաշտերի մօտով՝ զգալով նոցա մօտալուտ մահը եւ պատկերացնելով աշնան ու ձմրան գալիք թանկութեան, սովի ու թշուառութեան հեռանկարը: Սակայն Աստուած ամաչեցնելով մեզ մեր թերահաւատութեան համար՝ փոխել է մեր երկիւղն ու հոգսը ուրախութեան՝ մեր կարիքների չափով հունձ տալով մեզ: Բայց նրա փոխարէն մեծ առատութիւն է շնորհել մեր պարտէզներին ու այգիներին՝ զարդարելով նոցա կարմրաթուշ խնձորներով, քաղցրահամ տանձերով եւ խնկահոտ ու անոյշ խաղողով:

Այսպէս ուրեմն, երբեք չպէտք է յուսահատուել՝ հաւատալով, որ Աստուծոյ հովանաւոր աչքը միշտ մեզ հետ է:

*Շարունակությունը՝ էջ 2*

*21 օգոստոսի*

## ՏՈ՜Ն ԾՆՆԴՅԱ՜Ն ԳԱՐԵԳԻ՜Ն Բ

ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ




*Յուրաքանչյուր ազգի, ժողովրդի պատմության մեջ լինում են անցքեր, իրադարձություններ, որոնց ճակատագրական հետքը ծգվում, խորանում է դարերի մեջ եւ կատարման պահից որքան հեռանում, այնքան իմաստավորվում, այնքան հզորանում է նրանց դերն ու նշանակությունը, դառնում տվյալ ժողովրդի՝ հավերժություն տանող ճանապարհի ճշմարիտ ու «զվարթ» լույսը:*

*Այս «զվարթ» լույսն է, որ ծածկում է ամեն չարիք ու խավար, որ տիղմից վեր է հանում, լվանում եւ մաքրում ամեն բան՝ կարելիից անկարելին, երեւութականից աներեւույթը, իրականից անիրականը, հորիզոնից հորիզոն ու մինչեւ մեր միտքն ու հոգին, մեր էության արմատներն ու սաղարթները:*

*Մոլորակի վրա հազարամյակներ ապրող հայ ժողովրդի համար այս «Լույս զվարթը» ծագեց 301 թվականին: Վեհակերտումի ու արարչագործ այս Լույսը դարձավ մեր հոգու ու մտքի տրամաբանությունը, դարձավ դարերի մեջ, քարերի մեջ, մագաղաթի ու թղթի վրա ամբարված մեր մտքի ու կամքի հանճարը, դարձավ մեր Տան բազմադարյան ու սրբազան սյունը, մեր երազների ու տենչերի հայելին, որում կարողացանք տեսնել մեր հոգեկերտումի ճշմարիտ պատկերը: Այդ Լույսը դարձավ հայոց նոր կյանքի սկիզբը եւ հայոց՝ իր տրամաբանությունից ավելին լինելու գիտակցությունը: Հենց այս գիտակցությունն էր, որ դարեր շարունակ, առանց պետականության, օտարների լծի տակ, կեղեքումների, խոշտանգումների մեջ, եղեռնից մազապուրծ եղած, մեզ մղում շարունակելու ապրել ու արարել, հավատալ ու հուսալ, սիրել ու աղոթել, աղոթել անգամ մեր թշնամու համար:*

*Քրիստոնեությունը մեր ժողովրդի համար սովորական կրոնի պատահական ընտրություն չէր: Ամենամոր Որդուն հետեւորդ դառնալը հարության խորհուրդ էր ու ազատության ոգի, թող որ դժվարին, մշտապես խաչվելու ենթակա, բայց եւ ճշմարիտ ու հավերժալույս տանող ճանապարհ: Եվ ահա 17 դար այս ճանապարհին մեզ առաջնորդում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ իր շնորհազարդ, փառավոր ու իմաստուն, իր քրիստոսասեր ու հայրենանվեր հովվապետներով, որոնցից մեկն էլ, կամոքն Աստծո, Ձերդ Սրբությունն է:*

*Գիտենք, թե որքան ծանր ու պատասխանատու է Ձեր լուծը, որքան հոգսառատ ու անդադրում են անցնում Ձեր օրերը՝ հանուն Ձեր հոտի փրկության, հանուն մեր հայրենիքի հարագնա բարգավաճման, հանուն նրա եւ աշխարհի խաղաղության:*

*Ուստի, ծննդյան օրն առիթ ընդունելով, կամենում ենք Ձեզ՝ ազգընտիր հովվապետիդ, Քրիստոսի ողջախոհ ծառայիդ ցանկանալ նախանձելի առողջություն ու արեւշատություն, անսայթաք ու անստվեր ընթացք: Մեր անկեղծ մաղթանքն ու աղոթքն է, որ Տերն անսասան ու հարատեւ պահի Հայոց տիրընկալ Տունը, Իր հայրական օրհնությամբ, Սուրբ Հոգու շնորհներով, սիրով ու ջերմությամբ հավելի Ձերդ Սրբության ուժն ու եռանդը, կամքն ու կորովը, իմաստությունն ու հեռատեսությունը, ողջամտությունն ու ողջախոհությունը, որպեսզի Ձեր անձի վեհությամբ ու շուքով, բեղմնավոր գործունեությամբ ու առաքելությամբ առավել փառավորվի ու շենանա Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ իր շուրջը համախումբ ու միակամ պահելով համայն հայության հոգեւոր վերազարթոնքի, լուսավոր ապագա առաջնորդող ազգային մեծ ու նախանձախնդիր ոգին:*

*Որդիական սիրով եւ հավատարիմ աղախնու նվիրումով՝*

*Մատչիմք ի համբոյր Ձերդ օծեալ սուրբ աջոյն՝*

***«Քրիստոնյա Հայաստան»***
***թերթի խմբագրություն***
***Քրիստոնեական դաստիարակության***
***կենտրոն***

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ Գ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ

## (1113-1166)

*Սկիզբը՝ թիվ 14*

1118 թվին մահացած Ալեքս Ա Կոմնենոսին հաջորդեց Հովհաննես Բ Կոմնենոսը, որն ավելի հայտնի է Ծիրանածին անունով: Ալեքս Կոմնենոսը մեծապես ատում էր հայերին եւ անգամ հրաման տվեց հայերին կրկնամկրտել: Նրա որդին կրոնամոլ չէր եւ Կիլիկիայի իշխանության նկատմամբ միշտ նույն քաղաքականությունը վարեց: Այդ նույն տարում Բաղդադում մահացավ Մսթատր-Պիլլահ խալիֆը՝ 24 տարի սելջուկ սուլթանների գերիշխանության ներքո կառավարելով: 1115 թվին մահացավ սուլթան Տափարը, եւ Պարսկաստանում նրան փոխարինեց սուլթան Մասուդը, որին հաջորդեց Մսթարխետ-Պիլլահը, որի փորձերն ինքնուրույն գործելու ուղղությամբ ոչնչի չհանգեցրին սելջուկների խիստ ճնշման պայմաններում: 1135-ին նա սպանվեց դավաճանների կողմից: Նրա քաղաքականությունը շարունակել փորձող նրա որդի Ռաշիդ-Պիլլահը 1136 թվին գահընկեց արվեց, իսկ խալիֆական իշխանությունն անցավ նրա հորեղբայր Մքթաքի-Լիամրուլլահին: Իսկ երբ 1138-ին Ռաշիդ-Պիլլահը փորձեց վերադարձնել իշխանությունը, նա հոր նման սպանվեց, իսկ նրա հորեղբայրն իշխեց մինչեւ 1160 թիվը՝ սուս ու փուս ենթարկվելով սելջուկներին: 1117-ին Ռումի սուլթանությունում իշխում էր մեկ այլ Մասուդ, որի իշխանությունը շարունակվեց մինչեւ 1155 թիվը: Նա ժամանակակից եղավ հայոց կաթողիկոսին եւ նրա հետ այլեւայլ շփումներ ունեցավ: 1118-ին մահացավ Երուսաղեմի թագավոր Բոլդվին Բուլոնցին, եւ նրան հաջորդեց Եդեսիայի կոմս Բոլդվին Դ՝Բորկը, որն այդ ժամանակ գտնվում էր Երուսաղեմում: 1118 թվի ապրիլի 7-ին՝ Ծաղկազարդի օրը, նա գահ բարձրացավ՝ իր թագադրությունը մեկ տարով հետաձգելու պայմանով, եթե Եվրոպայից այդ ընթացքում գար Բուլոնցիների երրորդ եղբայրը եւ ժառանգեր իշխանությունը: Եվ քանի որ ոչ մեկը չեկավ, Բոլդվինը թագադրվեց: Սրա ձեռքով էր, որ հայկական շատ իշխանություններ վերացան:





1129 թվին մահացավ հայոց Թորոս Ռուբինյան իշխանը: Հավանաբար, ինչպես հավաստում է Հայսմավուրքը, նա իր մահկանացուն կնքեց արաց ամսվա 26-ին կամ փետրվարի 2-ին: Սակայն Մ. Օրմանյանը, հաշվարկելով շարժական տոմարով, չի բացառում, որ նա մահացել է 1129 թվի օգոստոսի 11-ին: Նրան հաջորդեց իր եղբայր Լեւոնը, քանի որ որդին՝ Կոստանդինը, մահացել էր. նրան ինչ-ինչ ամբարիշտ մարդիկ ձերբակալել էին եւ թունավորել: Պատմիչների տեղեկություններն այնպիսին են, որ կարելի է ենթադրել, թե Թորոսի մահից հետո Կոստանդինը կենդանի էր, եւ նրան թունավորել տվեց հենց Լեւոնը եւ տիրեց իշխանությանը: Լեւոն Ռուբինյանի գործերը սկզբում հաջողակ էին, եւ նրան հաջողվեց գրավել Տարսոնը, Ադանան եւ Մսիսը կամ Մոփսուեստիան, որոնք պատկանում էին բյուզանդացիներին: Նա քաջ պատերազմող էր եւ խնամիական կապեր ուներ խաչակիրների հետ:

Ինչ վերաբերում է Գրիգոր կաթողիկոսին, ապա, չնայած այն բանին, որ նա շարունակում էր գտնվել հայրենական դղյակում, որպես կաթողիկոս աստանդական վիճակ ուներ: Նա բանակցությունների մեջ մտավ Մանուչեին հաջորդած Աբուլվարի հետ, որպեսզի հաստատվի Անիում: Վերջինս հայերի նկատմամբ լավ չէր տրամադրված, սակայն կաթողիկոսին իր քաղաքում տեսնելը, ըստ երեւույթին, կարեւոր համարելով՝ համաձայնվեց: Սակայն Աբուլվարն ընկավ: Վրացական զորքերի Անի մտնելով, կարծես, հարցը տեղափոխվում էր դրական ուղի, սակայն շուտով քաղաքին տիրեց Փաթլունը եւ այնպիսի հակահայկական քաղաքականություն սկսեց, որ Գրիգոր կաթողիկոսի՝ Անիում հաստատվելը դարձավ անհնարին:

Ծովքում Գրիգորի օգնականն էր իրենից հինգ տարով կրտսեր եղբայրը՝ Ներսես Շնորհալին: Վերջինս քահանա ձեռնադրվեց շուրջ 1120-ին: Ինչ վերաբերում է եպիսկոպոսական ձեռնադրությանը, ապա պատմությունն այդ մասին տեղեկություններ չի պահպանել: Չնայած ավելի ուշ նրա եպիսկոպոսական իշխանության մասին տեղեկություն կա: Դրանից ելնելով՝ Մ. Օրմանյանը նրա եպիսկոպոս ձեռնադրվելը դնում է 1125-ի կողմերում:

Գրիգոր հայրապետը ստիպված էր զբաղվել Հայոց Արեւելից կողմերի՝ այսպես կոչված Աղվանից կաթողիկոսության խնդրով: Մեկ ու կես տարվա պաշտոնավարությունից հետո՝ 1131-ին, մահացել էր Ստեփանոս կաթողիկոսը, եւ 8 տարի շարունակ աթոռը թափուր էր մնացել: Չկարողանալով անձամբ գալ Արցախ՝ նա ուղարկեց Կարնո Սահակ եպիսկոպոսին, որը 1139 թ. հունիսի 11-ին հանգուցյալ Ստեփանոսի հորեղբորորդի Գագիկին կաթողիկոս օծեց՝ Գրիգորիս անունով, եւ նոր կաթողիկոսը Վարդավառի տոնին մյուռոնօրհնեք կատարեց եւ եպիսկոպոս ձեռնադրեց: Ութ պարապ տարիների ընթացքում մյուռոնը վերջացել էր, եւ եպիսկոպոս ձեռնդրելու անհրաժեշտություն էր առաջացել:

*Շարունակությունը՝ էջ 4*

**ՄԱՐԻՆԱ ՄԱԼԱՇԿԻՆԱ**

# Ի՞նչ ընդհանրություն կա մարդու հոգեկանի եւ պոլտերգեյստի միջեւ

Երեւույթների ո՞ր դասին կարելի է վերագրել պոլտերգեյստը (բառացի՝աղմկոտ ոգի)՝ ֆիզիկական անոմալիաների՞ (անկանոնություն), թե՞ հոգեկան ֆենոմենների (բացառիկություն): Սովորաբար պոլտերգեյստի նկարագրությունը կատարվում է ֆենոմենի զոհերի, նրանց հարեւանների կամ էլ պատահական ականատեսների խոսքերի հիման վրա, որի պատճառով էլ այն հաճախ օբյեկտիվ չի լինում: Այնուհանդերձ, այդ նկարագրություններում կան ընդհանրություններ:

Առաջինը՝ պոլտերգեյստն ավելի հաճախ գալիս է գիշերային ժամերին եւ հանգստյան օրերին:

Երկրորդ՝ պոլտերգեյստի ներգործության օբյեկտները մեծ մասամբ ոչ մետաղյա (անհաղորդիչ) առարկաներն են՝ հագուստ, գործվածք, կահույք, ամաններն եւ այլն: Հետաքրքիր է Բելոռուսիայի ոստիկանության մի փոխգնդապետի՝ 1988 թ. կազմած պաշտոնական փաստաթղթից բերված քաղվածքը, մանավանդ որ ոստիկանության աշխատակիցը, ըստ ծառայության պատասխանատվության, պետք է պահպանի օբյեկտիվությունը, զննի եւ նշի մանրուքները. «...Տան տերերը հայտնեցին, որ վերջին օրերի ընթացքում անհասկանալիորեն բնակարանի առարկաները տեղաշարժվում են (կոշիկներ, խոհանոցի ամանեղեն եւ այլն), էլեկտրական հաշվիչների խցանները, իրենց-իրենց պտտվելով, տեղից դուրս են գալիս ու հարյուր ութսուն աստիճան շրջադարձով թռչում դեպի բակ կամ փողոց...

Բնակարանում ոստիկանների անցկացրած մեկ ու կես ժամվա ընթացքում ոչ մի արտառոց բան չնկատվեց, բայց երբ նրանք գնացին դեպի մեքենաները, խցաններից մեկը լուսամուտից դուրս թռավ: Տուն վերադառնալով՝ օպերատիվ մարմինները հայտնաբերեցին, որ էլեկտրական հաշվիչի խցաններից մեկը տեղում չէր: Այդ ժամանակ տանտիրուհին գտնվում էր փակ պատշգամբում եւ հաստատեց , որ ոչինչ չի տեսել... Պատշգամբում բնակիչների հետ



զրուցելու ժամանակ բնակարան տանող դռնից խցան թռավ, մոտեցավ ոստիկան Կարտաշովին եւ մեկ-երկու մետր այն կողմ ընկավ գետնին... Սենյակի հետազոտությունը ցույց տվեց, որ տարածքում ոչ ոք չկար»:

Փոխգնդապետի զեկուցագիրը փոխանցվեց ե՛ւ Մինսկի համալսարան, ե՛ւ Բելոռուսիայի գիտությունների ակադեմիա. ոստիկանությունը միստիկային չի հավատում, իսկ գիտնականները հետաքրքրասեր մարդիկ են, թող փորձեն գլուխ հանել...

Իսկ ի՞նչ են ասում գիտնականները պոլտերգեյստի մասին: Ուկրաինայի գիտությունների ազգային ակադեմիայի հոգեբանության բաժնի վարիչ Վ. Իսակովը կարծում է. «Ինքնաբերական պոլտերգեյստի դեպքում մարդը կամ մարդկային խումբն ընկնում է մի առանձնահատուկ հոգեֆիզիոլոգիական վիճակի մեջ, որը մոտ է ինքնաներշնչման»: Այդ դրության մեջ, հոգեբան-բժշկի կարծիքով, մարդն անգիտակցաբար հսկայական ջանքերով աշխատանք է կատարում, այսինքն՝ խցաններ է հանում ու անհավանական արագությամբ նետում, դեռ ավելին՝ անհասկանալի կերպով փոխում դրանց ուղեծրերը:

Հավատս չի գալիս... Նման տրամաբանությունը կարող է ամեն բան բացատրել:

Պոլտերգեյստի վարկածներն են.

1. Կրոնական- «անմաքուր ոգու» ներգործությունը:

2. Օկուլտային- «ոգիների» ներգործությունը:

3. Սովորական պարահոգեբանական- առարկաների վրա մարդու (ավելի հաճախ՝ դեռահասի) ներգործությունը տելեկինեզով (առարկաների տարածության մեջ տեղաշարժվելու երեւույթը):

4. Պարահոգեբանական բարդությանխմբակային տելեկինեզ:

5. Պարահոգեբանական բազմաչափության- պոլտերգեյստը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մեր եռաչափ երկիրն են ընկնում չորրորդ չափումի առարկաների ստվերները:

6. Այլմոլորակային պարահոգեբանական- այլմոլորակայինների ազդեցությունը (պատահական եւ կամ կանխամտածված «թեստավորմամբ»), ժամանակի մեքենայի միջոցով ապագայից եկած մարդկանց գործողությունները:

7. Հոգեբանական- խաղարկություն (ծաղրելը), չարաճճիություն (թեթեւամտություն), խուլիգանություն, տարօրինակ որեւէ բնակարանի կամ տան բնակչի հոգեկան հիվանդությունը:

8. Կենցաղային. ներգործում է «գերմարդ» ավազակը:

9. Հեղինակի կարծիքը- լրագրողները սիրում են ցանկացած սենսացիա եւ սովորաբար մժեղից փիղ են սարքում:

10. Այստեղ ընթերցողը կարող է գրել իր սիրելի վարկածը...

Ուզածդ գիտության ներկայացուցիչները, իրենց իմացությունների շրջանակում, հեշտությամբ գտնում են պոլտերգեյստի բացատրությունը. երկրաբաններն այն բացատրում են ընդերքի ազատ տարածությամբ կամ սողվածքով: Ընահողը փլուզվում է, եւ առարկաները շարժվում են, խցանները՝ թռչում: Սակայն առարկաներն ինչո՞ւ են այդպիսի մեծ արագությամբ թռչում, իսկ տան պատերն էլ չեն ճաքում:

Գեոֆիզիկոսները կասեն, թե՝ «ի տարբերություն քարի՝ փայտը հրաշալիորեն է մարում ցնցումները»: Նրանց, ովքեր կասկածում են պոլտերգեյստի նյութական լինելու վրա, ֆիզիկոսները կհիշեցնեն, որ մենք մագնիսական փոթորիկների եւ արեւային ակտիվության աշխարհում ենք ապրում. մագնիսական փոթորիկ է սկսվում, ուստի եւ թռչում են խցանները: Իսկ ինչո՞ւ ոչ բոլորինը:

Ակուստիկները կարող են ենթադրել, որ տարօրինակ երեւույթները տեղի են ունենում թռչող ինքնաթիռների առաջացրած ցնցումների հետեւանքով:

*Շարունակությունը՝ էջ 7*

# ՀԱՅ ՀԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

> *Մարդկային ձեռքերի ստեղծածը, աշխատանքի գործերը՝ ամենալայն իմաստով, այսինքն՝ այն ամենը, ինչ արտադրել է մարդը, ինչը հետեւանք է մարդու գործունեության, կոչվում է կուլտուրա (մշակույթ):*
>
> ***(Խ. Սամուելյան, 1931, էջ 9)***

## Միջին քարի դար (մեզոլիթ)՝ Ք. ա. XII-VIII հազարամյակներ

Մեզոլիթյան ժամանակաշրջանում՝ Ք. ա. 12-8-րդ հազարամյակներում, երբ Հայկական լեռնաշխարհում ազդարարվեց արվեստի ծագումը, քարը հանդես եկավ որպես մի ինքնատիպ «կտավ»: Հնագույն նկարիչները անձավների պատերի բնականից հարթ մակերեսներին շագանակագույն, կարմիր եւ սեւ գույնի ներկերով պատկերում էին աստվածություններ, մարդկանց, կենդանիներ եւ երկնային լուսատուներ: Հայաստանի Հանրապետության մշակույթի հուշարձաններում, որպես արվեստի վաղագույն ժառանգություն, ցայժմ ունեցած տեղեկությունների համաձայն, առանձնանում են Խոսրովի Փոքր արգելոցի անձավապատկերները: Քարայրային գեղանկարչության նմուշներ են պատկերված Գառնի գյուղից 26-27 կմ արեւելք, Դարբանդ գետակի աջ ափին, բնական անձավի (13,5 x 10 x 6 մ) արեւմտյան եւ հյուսիսային պատերի վրա: 1979 թ. հայտնաբերված անձավապատկերները գտնվում են բնակավայրերից եւ ճանապարհներից մեծ հեռավորության վրա, Գեղամա լեռների դժվարամատչելի հատվածում, անձուկ կիրճում, որը մարդու բնակության համար համար չէ եւ ամենայն հավանականությամբ եղել է պաշտամունքի վայր: Շագանակագույն, կարմիր եւ սեւ ներկերով, անձավի պատերի բնական հարթությունների վրա, պատկերված են 166 ֆիգուրներ, որոնցից 164-ը մարդկային են, երկուսը՝ կենդանական:

Կենտրոնական՝ 3,3 x 1 մ մակերեսով կոմպոզիցիան կազմված է ոչ ուղիղ հինգ շարքից, ուր պատկերված են 4-35 սմ բարձրությամբ մարդկային ֆիգուրներ: Շագանակագույն, ժամանակի ընթացքում դարչնագույն երանգ ստացած մոնոխրոմ (միագույն) ներկով պատկերված են նրբագեղ, սլացիկ, ներճկված-ձգված իրանով, լայնաթիկունք, նեղ մեջքով, կլոր հետույքներով եւ շեշտված ազդրերով մարդկային մերկ մարմիններ: Դրանք բոլորն էլ ունեն ընդգծված երկարուկ գլուխներ եւ զերծ են սեռական առանձնահատկությունները շեշտող նշաններից: Պետք է ենթադրել, որ ավելի կլորիկ եւ նրբագեղ կոնքերով մարմինները պատկերում են կանանց: Արխայիկ ոճով կատարված պատկերները (տեսողական զուսպ ռեալիզմը՝ համադրված սխեմատիզմի եւ կոմպոզիցիայի դեկորատիվ բնույթի հետ) մեզ են հասցրել նախնադարյան մարդու կենդանի կերպարը: Որոշ պատկերներ խիստ ոճավորված են. մարդկային մարմինները ներկայացված են սիմվոլիկ-գծային S-աձեւ կոնտուրներով, իսկ գլուխները՝ օղակների տեսքով: Տարբեր չափի եւ ոճավորման մարդկային ֆիգուրները պատկերված են կիսադեմ՝ ձախ կողմից, կանգնած դիրքով, ներքին ռիթմով հագեցած երթի պահին, որն, անկասկած, ունեցել է ծիսահմայական բնույթ: Դարբանդ գետակի մերձակա քարայրի մուտքի հանդիպակաց պատին մարդկային ֆիգուր է (բարձրությունը 40 սմ)՝ նստած դիրքով: Սրա հարեւանությամբ կարմիր եւ սեւ ներկերի բազմերանգությամբ կատարված կենդանական պատկերները (30 x 20 սմ) վատ են պահպանվել:

Ուշագրավ է, որ ռիթմիկ-հանդիսավոր երթի պատկերումը հատուկ է նաեւ Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան արվեստին: Վաղ բրոզի դարում ռիթմիկ-հանդիսավոր երթի գաղափարը մարմնավորված է Շենգավիթից հայտնաբերված քրեղանի պատկերագրությունում, որի սեւով փայլեցրած մակերեսին շուրջից ցած ձգվող ծոփորն ամփոփում է ձախից աջ քայլող եղջերուների հաջորդական շարք՝ կատարված փորագծման տեխնիկայով: Միջին բրոնզի դարում ռիթմիկ-հանդիսավոր երթի գաղափարն արծարծված է բազմաթիվ հուշարձաններում: Առանձնահատուկ ուշադրության է արժանի Էջմիածնի թանգարանից ՀՊԹ տեղափոխված բազմերանգ գունազարդ անոթը, որի վրա սեւ ու կարմիր ներկով կրեմագույն ֆոնի վրա պատկերված են ձախից աջ քայլող ջայլամակերպ թռչուններ: Այս գաղափարի ամենացայտուն օրինակը, սակայն, Կորուկթաշի (Թռեղք) դամբանաբլրից հայտնաբերված արծաթե գավաթն է, որի վերին ծոփորում պատկերված է գայլապոչ դիմակավոր մարդկանց (կիսադեմ) հանդիսավոր երթը դեպի գահի վրա նստած աստվածությունը, իսկ ստորին ծոփորը բաղկացած է ներքին ռիթմով հագեցած հյուսիսային եղջերուների դանդաղ, հանգիստ քայլքը պատկերող կոմպոզիցիայից: Ուշագրավ է այն հանգամանքը, որ բրոնզեդարյան թեմաներում ծիսական երթի մասնակից մարդիկ եւ կենդանիները, գրեթե առանց բացառության, պատկանում են արական սեռին:

Խոսրովի արգելոցի անձավապատկերների այս խիստ ուշագրավ խումբը թվագրվում է մեզոլիթյան կամ վաղ նեոլիթյան ժամանակաշրջանով (Ք. ա. XII-VIII հազարամյակ): Բնության մեկուսի վայրում քարանձավային գեղանկարչության առկայությունը, ինչպես նաեւ հարեւան քարայրի առաստաղից բխող ջուրը վկայում են, որը տարածքը նախնադարում պաշտամունքային նշանակություն է ունեցել եւ օգտագործվել է ծիսահմայական, թերեւս **ինիցացիայի** (մարդուն որեւէ համայնքի, կազմակերպության լիակատար անդամագրության կամ մի վիճակից մյուսին՝ ավելի բարձրին անցնելու ծիսական արարողակարգ) արարողության ժամանակ:

Քարանձավային գեղանկարների մեկ այլ խումբ հայտնաբերվել է Վանի նահան-




գում՝ Վան քաղաքից 76 կմ հարավ-արեւելք, ծովի մակարդակից 2500 մ բարձրության վրա գտնվող Պուտ (այժմ՝ Եղիսակլիմ) գյուղից արեւելք: Այստեղ մոտ 9 կմ ձգվում է 150 մ խորությամբ կիրճը, որի ուղղաձիգ կտրված ժայռերի մեջ կան տասնյակ ու տասնյակ քարանձավներ: Սրանցից չորսը, տեղադրված կիրճի հատակից 20-80 մ բարձրության վրա, զարդարված են կենդանիների վրա կանգնած աստվածուհիների ու աստվածների, սոլյար նշանների, եղնիկների, քարայծերի, որսված կենդանիների ավելի քան 150 պատկերներով (նկ. 1): Սրանց մեծ մասը ժամանակի ընթացքում գրեթե անհետացել են կամ ծածկվել մրով: Պահպանված պատկերները կարմիր եւ դարչնագույն են: Տեղացիների կողմից «Աղջիկների քարանձավ» (Կիզլարին մաղասի) անվանակոչվածը կիրճի հատակից բարձր է 75 մ: Սրա պատերին պատկերված են պարող աստվածուհիներ (նկ. 2): Համանման անձավապատկերներ հայտնաբերվել են նաեւ Անթալիի մոտի Բելդիբի քարայրում: Մեր կարծիքով՝ մեծ է նմանությունը Գոբիստանի «Վեր սանրած մազերով» կնոջ ֆիգուրի եւ Վանի նահանգի ժայռանկարների միջեւ:

*Շարունակությունը՝ էջ 6*

---

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ Գ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ

## (1113-1166)

*Սկիզբը՝ էջ 3*

Այժմ տեսնենք, թե ինչպես էին զարգանում դեպքերը Ռուբինյանների իշխանությունում: Ինչպես ասվեց, սկզբում ամեն ինչ հաջող էր: Նա բարեկամություն ուներ խաչակիրների հետ եւ Ազազի պատերազմում մեծ վտանգից անգամ փրկել էր Անտիոքի Ռոջերին եւ դարձել նրա սիրելին: Այսպես շարունակվեց մինչեւ 1135 թիվը, երբ Սարվանդիքար բերդը գրավելու հետ կապված՝ նրա հարաբերությունները խաչակիրների հետ լարվեցին: Անտիոքի դուքսը Երուսաղեմի թագավորի օգնությամբ պատերազմ սկսեց Լեւոնի դեմ, որին օգնում էր Եդեսիայի կոմսը: Սակայն թշնամին ավելի ուժեղ գտնվեց եւ ավերեց Ռուբինյանների իշխանությունը, իսկ Իկոնիայի սուլթանությունը, օգտվելով դրանից, ներխուժեց Կիլիկիա եւ մեծ թվով գերիներ տարավ: Որքան էլ տարօրինակ լինի, չնայած երկրի ավերմանը, Անտիոքի դուքսի արշավանքը նրան առանձին օգուտ չբերեց սելջուկների արշավանքի հետեւանքով, եւ որոշ ժամանակ դադար տիրեց: 1138-ին Անտիոքի նոր դուքս Բոհեմունդը նենգորեն ձերբակալեց Լեւոնին եւ բանտարկեց: Վերջինս ուներ չորս որդի՝ Թորոս, Ստեփանե, Մլեհ եւ Ռուբեն, ինչպես նաեւ մի հարճորդի՝ Կոստանդին անունով: Յոր ձերբակալությունից հետո, փոխանակ նրա վրեժը լուծելու, նրանք իրար վրա հարձակվեցին եւ հարճորդի Կոստանդինին կուրացրին: Չստանալով օժանդակություն իր զավակներից՝ Լեւոնը, հույսը կորցնելով, 60 հազար դահեկան փրկագին վճարեց, վերադարձրեց ոչ միայն Սարվանդիքարը, այլեւ Ադանան ու Մսիսը, պատանդ տվեց իր զավակներին եւ երկամյա բանտարկությունից հետո ազատվեց ու ետ վերադարձավ: Սակայն շուտով նա հարձակման անցավ, զիջած քաղաքներն ու հողերը ետ առավ եւ միայն Եդեսիայի կոմսի միջնորդությամբ հաշտություն կնքեց՝ ետ ստանալով իր պատանդ որդիներին:

Այդ ժամանակներում Կիլիկիայում հայտնվեցին բյուզանդական զորքերը, եւ Լեւոն Ռուբինյանը, հավատարիմ իր կնքած պայմանագրին, հարձակվեց նրանց վրա եւ կասեցրեց նրանց շարժումը: Խաչակիրները գոհ մնացին, սակայն հայերի եւ բյուզանդացիների հարաբերությունները խիստ սրվեցին: Յովհաննես Կոմնենոս կայսրն ուղղակի արշավեց Լեւոնի դեմ՝ հայոց իշխանությունը ոչնչացնելու նպատակով: Թշնամին հարձակվեց կիլիկյան քաղաքների վրա: Լեւոնը, որ այդ ժամանակ փորձում էր գրավել Սելեւկիա քաղաքը, ստիպված արագ վերադարձավ Դաշտային Կիլիկիա: Նա անցավ Վահկա բերդը, որը 1137 թվին



նվաճվեց թշնամու կողմից: Լեւոնը գերի ընկավ եւ տարվեց Կոստանդնուպոլիս, որտեղ էլ գերության մեջ մահացավ, իսկ Յայոց իշխանությունը մի քանի տարով դադարեց գոյություն ունենալուց:

Ստեղծված ծանր իրադրության մեջ Գրիգոր կաթողիկոսին այլ բան չմնաց, քան բարեկամական հարաբերություններ մշակելը խաչակիրների հետ: Առավել մոտիկն Անտիոքի դքսությունն էր, որի հետ Լեւոն Ռուբինյանը հաշտվել էր եւ նրանց պատճառով էլ իր վրա էր հրավիրել բյուզանդացիների թշնամությունը: Սակայն խաչակիրներն էլ հայկական տարրի խիստ կարիքն ունեին, ուստի 1141 թվին լատիններն Անտիոքում եկեղեցական ժողով գումարեցին՝ հրավիրելով Գրիգոր կաթողիկոսին եւ նրա եղբայր Ներսես Շնորհալուն: Ժողովը գումարվել էր քննելու համար Անտիոքի պատրիարք Յռոդոլփոսի դեմ առաջ քաշված ամբաստանությունը, որ հասել էր մինչեւ Յռոմի պապին: Ինոկենտիոս Բ պապն իր կողմից Անտիոք ուղարկեց Օստիայի կարդինալ-եպիսկոպոս Ալբերիկոսին՝ քննելու ամբաստանության հանգամանքները:

Անտիոքի պատրիարքը մեղադրվում էր Տանկրեդին թունավորելու մեջ, եւ ենթադրվում էր, որ Գրիգորը եւ Ներսեսը՝ որպես տեղացիներ, կարող էին օգնել գործի քննությանը: Յռոդոլփոսին դատապարտեցին, իսկ հայոց հոգեւոր այրերին հաջողվեց հարաբերությունների մեջ մտնել լատինների հետ, որոնց բարեկամությունն այդ դժնդակ պայմաններում կարող էր օգտակար լինել հայերի համար:

Ավելորդ է ասել, որ հայերի նման լատիններն էլ իրենց խնդիրներն ունեին, որոնց մասին դեռ բացահայտ չէին խոսում: Նրանք կամենում էին իրենց եկեղեցուն ենթարկել հայերին: Այդ նպատակով Ալբերիկոսը Գրիգոր կաթողիկոսին խնդրեց իր հետ Երուսաղեմ գնալ, որտեղ նա մտադիր էր սուրբ վայրերն այցելել եւ լատինների գործերն Արեւելքում մոտիկից քննել: Գրիգորը ստիպված էր համաձայնել դրան: Ուստի նա իր եղբորը՝ Ներսեսին ուղարկեց Ծովք, իսկ ինքն Ալբերիկոսի հետ մեկնեց Երուսաղեմ, որտեղ նրանք միասին տոնեցին 1142 թ. Զատիկը (ապրիլի 19-ին): Ալբերիկոսը մի ժողով էլ գումարեց Երուսաղեմում, որին հարկավ մասնակցեց նաեւ հայոց հայրապետը: Նա ստիպված եղավ այստեղ պաշտպանել հայոց դավանությունը, բացատրել առկա տարբերությունները: Ոչ մի փաստ չկա, որ հայոց հայրապետն այդ ժողովում գնացել է զիջումների: Գրիգորը պարզապես փորձել է ցույց տալ, որ տարբերություններն էական չեն եւ անհրաժեշտության դեպքում կարող են ուղղվել: Ասենք, որ նա, ձգտելով ձեռք բերել լատինների աջակցությունը, հազիվ թե կարող էր այլ կերպ գործել: Լատիններն էլ, չկորցնելու համար հայերի բարեկամությունը, առանձնապես առաջ չեն գնացել իրենց պահանջներում: Իսկ համաձայն Կիրակոս Գանձակեցու՝ դրանով վերականգնվել է Տրդատ թագավորի եւ Գրիգոր Լուսավորչի եւ Կոստանդիանոս կայսեր եւ Սեղբեստրոսի միջեւ կնքված դաշինքը, չնայած այդ ժամանակ դեռ դաշանց թուղթ չկար, եւ անգամ լատինները չեն ակնարկել այդ մասին:

Գրիգորը միանգամայն գոհ վերադարձավ Երուսաղեմից: Ալբերիկոսն էլ իր հերթին պապին միանգամայն դրական ներկայացրեց հայ-լատինական հարաբերությունները, եւ Յռոմի պապը սիրո գիր ուղարկեց հայոց հայրապետին՝ եկեղեցական ընծաներով հանդերձ՝ գավազան եւ հայրապետական քող:

*Շարունակությունը՝ էջ 6*

## ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՃՇՄԱՐԻՏ ԿՐՕՆԸ

*Սկիզբը՝ էջ 2*

### Սուտ մարգարեներ

Մարգարեանալը բոլոր կրոնական շարժումների հիմքում միշտ էլ եղել է: Հայտնի է, որ Հին Կտակարանում Մովսեսը վճռական պահերին հարցնում էր Աստծուն եւ իմանալով Տիրոջ կամքը՝ հնազանդվում էր եւ դրանով առաջնորդում ժողովրդին: Շատ աղանդներ իրենց նմանեցնում են աստվածաշնչյան այս կամ այն պատմությանը: Օրինակ՝ մորմոնական աղանդի պատմությունն



իր հայտնություններով նմանեցված է հինկտակարանյան Իսրայելի պատմությանը, այն տարբերությամբ, որ թագավորն ու մարգարեն՝ մորմոնական աղանդի առաջին նախագահն է: Աղանդների հետեւորդները պետք է իմանան, որ նաեւ սուտ մարգարեներ կան, որոնք մոլորություն են տարածում: Հովհաննու «Հայտնության» մեջ ասվում է. «Տեսա, որ.... սուտ մարգարեի բերանից ելնում էին երեք անմաքուր ոգիներ» (ԺԶ 13), մեկ այլ համարում եւս ասվում է. «Եվ բռնվեց գազանը ու նրա հետ եղող սուտ մարգարեն, որ նրա առաջ նշաններ էր գործում. դրանցով մոլորեցնում էր նրանց» (ԺԹ 20): Աստվածաշունչն ասում է, որ այդ սուտ մարգարեներին ներշնչողը սատանան է, որն ի վերջո պիտի պատժվի. «Եվ երկնքից՝ Աստծո մոտից, կրակ պիտի իջնի,- ասվում է Աստվածաշնչում,- ու պիտի լափի նրանց եւ նրանց զորագլխին՝ սատանային, որը մոլորեցրեց նրանց (Հայտնութ. Ի 9): Աղանդավորական շարժումների պատմությունը ցույց է տալիս, որ նրանք ծագել են մարգարեական հողի վրա, բայց իրականում այդ մարգարեությունները երբեք չեն կատարվել:

Մինչդեռ Աստվածաշնչի բոլոր մարգարեությունները կատարվել են եւ կատարվելու են: Սակայն, օրինակ, մորմոնական «Վարդապետություն եւ Ուխտեր» գրքում առկա մարգարեություններից ոչ մեկը մինչեւ այսօր էլ չի իրականացել: Նույնն են նաեւ ադվենտիստների մոտ Քրիստոսի երկրորդ գալստյան գուշակությունները, Եհովայի վկաների մոտ Արմագեդոնի զանազան տարեթվերի գուշակությունները եւ այլն: Մոլորյալ, միամիտ շարքային աղանդավորները, չգիտես ինչու, մատների արանքով են նայում իրենց հրամցված տարբեր մարգարեությունների չիրականացված լինելու հանգամանքին, մինչդեռ ըստ Հին Կտակարանի՝ եթե չի կատարվում մարգարեի ասածը, նրան քարկոծում են, որպեսզի չմոլորեցնի ժողովրդին: Այս է որեւէ մարգարեության ստուգման սկզբունքը, որը հմտորեն շրջանցվում է կամ էլ այլաբանորեն մեկնաբանվում աղանդների ղեկավարության կողմից: Այս իմաստով, ինչպես նշում է աղանդների ուսումնասիրությամբ զբաղված՝ մեր Եկեղեցու հոգեւորականներից Տ. Ղեւոնդ քահանա Մայիլյանը, որոշ աղանդների առաջնորդներ հայտնվել են շատ խղճալի վիճակում. նրանք այսօր ստիպված պիտի բացատրեն, թե ինչու չեն կատարվել իրենց նախորդների մարգարեությունները:

### Ինքնաաստվածացում

Այսօրվա բոլոր աղանդավորներն իրենց համարում են Աստծուց ներշնչված եւ Նրա զորությամբ գործող: Սակայն շատ հաճախ որոշակի զգացողություններ եւ տարբեր ոգեւորություններ լինում են պարզապես մարդկային զգացմունքներից ու տրամադրվածությունից, եւ ահավոր բան



է, երբ այդպիսի վիճակում գտնվող մարդն իրեն անմիջապես Սուրբ Հոգով ներշնչված է համարում: Այս դեպքում արդեն մարդ աստվածացնում է իրեն եւ իր զգացմունքները, իսկ սրա մեջ խիստ վտանգ կա, որին ենթարկվում են աղանդավորների կողմից մոլորված բազմաթիվ մարդիկ: Այսպիսին են հատկապես Հայաստանում տարածված հայտնություններ ստացող կամ լեզուներ խոսող աղանդների անդամները:

*Շարունակությունը՝ էջ 8*

---

# Կորստաբեր ագահության եւ փրկաբեր ժուժկալության մասին

> *«Տեսե՛ք, որ զգույշ լինեք ամեն տեսակ ագահությունից, որովհետեւ մարդու կյանքն իր կուտակած հարստության մեջ չէ»*
>
> **(Ղուկ. ԺԲ 15):**

Տերունավանդ այս պատգամն ու պատվիրանը դարեր ի վեր խոսում է ողջ մարդկության հետ սուրբգրային էջերից, սթափեցնում եւ զգուշացնում հեռու փախչել ագահությունից, քանի որ այդ չէ մարդու կյանքի նպատակն ու իմաստը: Դժբախտաբար ներկայումս մարդկությունը հասել է այնպիսի մի վիճակի, որ այլեւս գրեթե անհնար է վերադառնալ սակավապետ կյանքին, ժուժկալ, չափավոր ապրելակերպին: Սուրբգրային այս պատգամը, կարելի է ասել, առավել ուղղված է ավելին ունենալու անհագուրդ ու անվերջանալի պահանջներով տառապող մերօրյա մարդկությանը՝ որպես սթափեցնող եւ զգաստացնող մի կոչ:

Մեր Եկեղեցու սուրբ հայրերն ագահությունը դասել են յոթ մահացու մեղքերի շարքը: Մարդն ինչպես որ պահպանվում է առաքինությամբ, այդպես էլ ապականվում է մոլությամբ: «Մոլությունները մարդուն ոչ միայն չար են դարձնում եւ հավիտենական դատապարտության արժանի, այլեւ աղքատ, անարգ ու վաղամեռիկ» (Պողոս Ադրիանուպոլսեցի): Ագահությունը դրամի եւ ունեցվածքի անհագ բաղձանքն է: Սբ Պողոս առաքյալն ագահությունն անվանում է կռապաշտություն (տե՛ս Կող. Գ 5) եւ ասում, որ այդպիսիք Աստծու եւ Քրիստոսի թագավորության մեջ ժառանգություն չունեն (տե՛ս Եփես. Ե 5): Ագահը չի կարող պաշտել Աստծուն, որովհետեւ ծառայում է մամոնային, ուստի կռապաշտ է եւ ոչ աստվածապաշտ, ինչպես եւ գրված է. «Չե՛ք կարող ե՛ւ Աստծուն ծառայել, ե՛ւ մամոնային» (Ղուկ. ԺԶ 13): Մինչդեռ ագահության հակադիր առաքինությունը ժուժկալությունը կամ չափավորությունն է: Ցավոք, մեր օրերում խիստ դժվար է ապրել ժուժկալ կյանքով: Մարդկության ողջ պատմության ընթացքում հավանաբար աստվածապատկեր մարդ էակն այնքան շատ չի տառապել ագահության ախտով, որքան մեր օրերում. ավելին ունենալու անհագ մոլուցքը կուրացրել է շատերին. ագահն անողորմաբար զրկում է ամեն մեկին, ոտնահարում իր նմանների իրավունքները՝ անխղճորեն հափշտակելով նրանց ունեցվածքը, աներկյուղ գողանում, սպանում՝ իր վրա բերելով Աստծու արդար զայրույթն ու բարկությունը: Այլեւ այս ախտով տառապող մարդիկ իրենց ողջ կյանքում տանջանքով են ապրում, որովհետեւ միշտ տառապում են գանձեր մթերելու համար, մտքով տանջվում, թե ինչպես ձեռք բերեն չունեցածը եւ ինչպես պահպանեն ունեցածը, ուստի ագահության չար ախտը կործանարար հետեւանքներ է ունենում մարդու հոգու եւ մարմնի վրա միաժամանակ՝ կարճելով մարդու կյանքը: Ագահը չի ճանաչում մարդկային բնության տկարությունը, չի գիտակցում, որ շատ երկար տարիներ կենդանի մնալ չի կարող, քանի որ մահկանացու է: Ավելին ունենալու անհագ բաղձանքով տարված եւ իրեն անմահ կարծելով՝ մթերում, կուտակում է շատ տարիների գանձեր՝ հակառակ Տիրոջ խոսքի. «Գանձեր մի՛ դիզեք...» (Մատթ. Զ 19): Ագահը երբեք չի հագենում կուտակելուց, ինչպես եւ իմաստունն է ասում. «Արծաթ սիրողը չի կշտանա արծաթից, ոչ էլ հարստություն սիրողը՝ իր եկամուտներից. ուստի դա եւս ունայնություն է» (Ժող. Ե 9): Եվ ցավերով ու սրտի կսկիծով էլ մեռնում է՝ գանձերն իր կամքին հակառակ թողնելով, քանի որ «ոչինչ չբերեցինք աշխարհ, ոչ էլ պիտի կարողանանք տանել» (Ա Տիմ. Զ 7):

Սակայն աստվածճանաչողություն չունեցող մարդու համար ունայն խոսքեր են սուրբգրային խոսքերը: Նրանք ապրում են միայն այս աշխարհի չափանիշներով եւ այս աշխարհի պահանջների համաձայն՝ ավելի ու ավելի բարեկեցիկ ու հարմարավետ դարձնելով իրենց կյանքը շքեղության ու ճոխության մեջ, ցոփ ու շվայտ կյանք վարելով՝ կարծելով, որ երջանկությունը հենց դա է: Մինչդեռ մարգարեն վա՜յ է տալիս այդպիսիներին՝ ասելով. «Վա՜յ նրանց, ովքեր տանը տուն են կցում եւ ագարակին ագարակ միացնում, իսկ ընկերոջն արտաքսում են զրկանքներով. թեպետեւ մեծամեծ շինություններ էլ կա-



ռուցեն, ավերակ են դառնալու» (Եսայի Ե 8-9): Տերն էլ, պատմելով անմիտ մեծահարուստի առակը, հորդորեց զգուշանալ ագահությունից, գանձ չկուտակել իր անձի համար, այլ «հարստանալ Աստծով», որովհետեւ՝ «Ի՞նչ օգուտ է մարդուն, եթե ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի» (Մարկ. Ը 36): «Աշխարհն իր սին վայելչությամբ հրապուրում է միայն երկրավոր բաների մասին մտածել. առաջարկում է հարստություն, փառք, փափկակեցություն, ջանում ողորմածների ձեռքերն աղքատներից ու կարոտյալներից հեռու պահել, որպեսզի այս կյանքը ճոխ ունեցվածքով վայելեն ու ոչնչի պակասություն չունենան» (Պողոս Ադրիանուպոլսեցի): Սակայն զուր են չարչարվում աշխարհի իրերում իրենց վերջին երջանկությունը գտնելու, քանի որ եթե նույնիսկ աշխարհի բոլոր բարիքներով հղփացած լինեն, միշտ անհանգիստ են եւ չունեն խաղաղություն, քանի որ տանջվում են խղճի խայթոցներից, չեն կարողանում անվրդով ապրել եւ ուրախանալ: Ահա թե ինչու է սուրբ Հակոբոս առաքյալն ազդարարում ագահ հարուստներին. «Ձեր հարստությունը փտած է, ձեր զգեստները՝ ցեցի կեր, եւ ձեր արծաթն ու ոսկին՝ ժանգոտած» (Հակ. Ե 2-3): Մինչդեռ ժուժկալ, ողորմած կյանքով ապրող մարդը խաղաղ ու անվրդով է ապրում, բավարարվում է չափավորով, ինչպես եւ առաքյալն է ասում. «Ունենք կերակուր եւ հանդերձներ ու դրանցով էլ բավականանանք» (Ա Տիմ. Զ 8): Նա միշտ գոհ է իր վիճակից եւ վայելում է իր աշխատանքի վարձը: Այլեւ մարդասիրաբար օգնության ձեռք է մեկնում չքավոր եւ կարոտյալ իր եղբայրներին, գիտակցում է, որ «պանդուխտ է երկրի վրա, ուստի ժամանակ առ ժամանակ իր բուն հայրենիք՝ երկինք է առաքում բարեգործությունների գանձերը, որ ձեռք բերեց իր ողջ կյանքում» (Պողոս Ադրիանուպոլսեցի), այսինքն՝ իր ունեցվածքից բաժին է տալիս Աստծուն՝ աղքատների ձեռքով՝ գիտակցելով, որ «Քրիստոս, մեր փրկության համար աղքատների հետ շրջում է մեր դռների մոտ» (Վ. Այգեկցի): Երկնքում է ամբողջ գանձերը (տե՛ս Մատթ. Զ 19-20) եւ անիրավ մամոնայից բարեկամներ է շահում՝ որպես հավիտենական պաշար (հմմտ. Ղուկ. ԺԶ 9)՝ մտաբերելով Տիրոջ խոսքը, որ ասում է. «Ուր ձեր գանձերն են, այնտեղ եւ ձեր սրտերը կլինեն» (Մատթ. Զ 21):

Եթե ագահ հարուստներն էլ, ովքեր խեղդվում են տնտեսական չափազանց բարօրության մեջ, չիմանալով այլեւս ինչպես շռայլել եւ մսխել ավելորդ դրամները, կարողանային տեսնել իրենց շուրջն ապրող աղքատ մարդկանց, հազիվ գոյատեւող կարիքավոր ընտանիքների, վեհանձնաբար զրկեին իրենց որոշ հաճույքներից, օգնության ձեռք մեկնեին, փոքր-ինչ մեղմեին նրանց սոցիալական ծանր կացությունը, ամեն բան այլ կերպ կլիներ: Մեր հոգեկիր հայրերից սբ Վ. Այգեկցին, վկայակոչելով Տիրոջ այն խոսքը, թե «հարուստը դժվարությամբ կմտնի երկնքի արքայությունը» (Մատթ. ԺԹ 23), ավելացնում է. «Սակայն շատ մեծատուններ կմտնեն Աստծո արքայություն, եթե լինեն բարեսեր, ողորմած, անկաշառ, իրավադատ, խոնարհ, չզրկեն ուրիշներին»:

Ուրեմն գիտենալով ագահության ախտի կործանարար հետեւանքները եւ ժուժկալության առաքինության բազում օգուտները՝ թողնենք աշխարհասիրությունը եւ առաքինության հետեւենք, չապականենք մեր աստվածաստեղծ հոգիներն ագահության մոլությամբ, այլ զարդարենք դրանք առաքինության գործերով: Պայքարենք ագահության ախտի դեմ ժուժկալության, ողորմածության առաքինություններով, որովհետեւ առաքինության գործերի արդյունքը երանական փառքն է, որ խոստացավ Աստված Իր սիրելիներին: Հիշենք, որ ներկայիս հեշտությունները դառը վախճան են ունենալու, ուստի զօր ու գիշեր հսկենք մեր անձերի փրկության համար, ապաշխարության սպեղանիներով դարմանենք մեղքերով հիվանդացած մեր հոգիներն ու ապավինենք մեր հոգիների ու մարմինների Բժշկին՝ Աստծուն: Ողորմած է Աստված եւ ներողամիտ, անեզր է Նրա քաղցրությունը, եւ բաց են Նրա ողորմության դռներն ու չեն փակվում ապաշխարողների առաջ. «Ապաշխարության կյանքի դուռը չի փակվելու մինչեւ աշխարհի վախճանը»,- ասում է մեր հավատի հայր սբ Գր. Լուսավորիչը: «Բարիք գործենք, բարի գործերով հարստանանք, լինենք առատաձեռն, բարեսեր, մեր ունեցածից ուրիշին էլ բաժին հանենք՝ մեզ համար բարի հիմք դնելով հանդերձյալում, որպեսզի ձեռք բերենք ճշմարիտ կյանքը» (հմմտ. Ա Տիմ. Զ 18-19):

**ԱՆԺԵԼԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅ ՀԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ


Նկ.2

Սկիզբը՝ էջ 4

Իրենց խորհրդանիշը հանդիսացող կենդանիների վրա աստվածությունների պատկերումը լայնորեն տարածված էր Հին Արեւելքի Ք. ա. II-I հազարամյակների քաղաքակրթությունների արվեստում, ինչպես, օրինակ, խեթական եւ Վանի թագավորության աստվածությունների պատկերումն էր առյուծների, ցուլերի եւ այլ կենդանիների վրա: Փաստորեն այս գաղափարն իր հնագույն նախատիպն է ունեցել Վանա լճի ավազանում եւ մարմնավորում է գտել դեռեւս միջին քարի դարի գեղարվեստում:

2002 թ. Սաղմոսավանքի հանդիպակաց քարանձավներից մեկի պատերին ուսումնասիրվեցին կարմիր օխրայով նկարված տարաբնույթ պատկերներ, որոնցից հնագույնները թերեւս պատկանում են մեզոլիթյան ժամանակաշրջանին: Առանձնապես տպավորիչ է ձիու նկարը՝ կատարված Եվրոպայի վերին հին քարի դարի գեղանկարչությանը բնորոշ ոճով:

Քարանձավային գեղանկարչության նմուշներ են հավաստվել նաեւ Կարսի սարահարթում:

Մեզոլիթյան ժամանակաշրջանից Հայկական լեռնաշխարհում սկիզբ է առնում ժայռապատկերների արվեստը, որը լայն տարածում է ստանում եւ հարատեւում մինչեւ միջնադար: Ժայռապատկերները հնագույն պատմության եւ մշակույթի ինքնատիպ սկզբնաղբյուրներ են: Հրաբխային ռումբերի, առանձին հսկա ժայռաբեկորների եւ քարաժայռերի հարթ մակերեսներին փորագրվում, փորագծվում եւ քանդակվում էին երկրաչափական ու բուսական զարդանախշեր, մարդիկ, կենդանիներ, թռչուններ ու սողուններ, զենքեր, կենցաղային իրեր, սայլեր ու մարտակառքեր, դիցաբանական, մարտի ու որսի տեսարաններ: Ժայռապատկերների քանակը հաշվվում է հարյուր հազարներով: Բացօթյա, հնագույն «տաճարներ»-ի անհրաժեշտ ատրիբուտները կազմող այդ պատկերները սփռված են Գեղամա, Սյունիքի, Տաշիրի, Արցախի եւ այլ լեռներում ու բարձրադիր վայրերում: Դրանց շնորհիվ մեզ են հասել հազարամյակներ առաջ ապրած մարդկանց կրոնական պատկերացումները, աշխարհընկալումները, կենցաղը, ծեսերը, նրանց շրջապատող կենդանական աշխարհը, ռազմի եւ որսի տեսարանները վերարտադրող արվեստի առաջին գործերը՝«կտավները»:

Պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ հիշատակվում է Տորք Անգեղի առասպելը, որտեղ հերոսը ոչ միայն հսկայական ապառաժ քարերով հեռու է վանել Սեւ ծովից իր հայրենիքին սպառնացող ասպատակիչների նավերը, այլեւ իր եղունգներով հղկել է որձաքարերը եւ դրանց վրա կերտել արծիվներ եւ այլ պատկերներ: Ըստ ակադեմիկոս Արամ Ղանալանյանի՝ Հայկական լեռնաշխարհի նախաբնիկների՝ խեթերի, հայասների եւ այլ ցեղերի պանթեոնի Տորք աստվածությունը, թերեւս, ծագում է խեթական Տարխու աստվածությունից: Նա իր գործունեությամբ, փաստորեն, վկայում է Հայկական լեռնաշխարհում լայնորեն տարածված վեմերի վրա պատկերների՝ ժայռապատկերների փորագրման մասին (Ա. Ղանալանյան, 1978, էջ 26): Հայաստանի լեռներում, բարձրադիր սարահարթերում, լեռնալանջերին, հրաբխավեժ քարացած լավաների պղնձագույն եւ սեւ, ասես կպրապատ մակերեսներին՝ «արեւայրուքների» վրա, ժայռերի հարթ մակերեսներին կամ հրաբխային ռումբերի ու առանձին բազալտ քարերի վրա ծեծելու եւ փորագրելու տեխնիկայով պատկերված են ամենաբազմազան բնույթի պատկերաքանդակներ, նախապատմական մարդու կենաց պատմությունն ու հոգեւոր ընկալումները: Դրանք կենդանիների (հիմնականում՝ քարայծեր, եղջերուներ, ցուլեր, գիշատիչներ, օձեր, հազվադեպ՝ թռչուններ) եւ մարդկանց (աստվածներ, հերոսներ, որսորդներ) սխեմատիկ պատկերներ են: Հեռավոր ժամանակներից մեզ հասած այդ նկարվածքներում դրոշմված են բնության անզուսպ ուժերի դեմ պայքարի, մարդկային հասարակության կենաց ու մահու մաքառումների, նախապատմական մարդու երազանքների եւ աշխարհընկալումների առանցքային դրսեւորումները, հանապազօրյա կյանքի դրվագները, դեպքերն ու դիպվածքները: Հին Հայաստանի այս «քարե մատյաններն» ունեն տարբեր չափեր եւ հնչեղություն, նկարվածքի բազմաժանրություն եւ կատարման տեխնիկայի բազմազանություն: Ժայռապատկերների սյուժեները տարբեր են եւ ներկայացնում են ինչպես աշխարհիկ (որսի, ռազմի, կենցաղային), այնպես էլ դիցաբանական (կոսմոգոնիկ, պաշտամունքային, ծիսական բեղմնավորում, հերոսապատում) թեմաներ: Նախապատմական նկարիչների երբեմն անվարժ, սակայն անմիջական քանդակները ներկայացնում են կախարդական, հմայքներով ու աստվածություններով լի հեքիաթային մի աշխարհ, որտեղ իրականն ու անիրականը սերտորեն շաղախված են միմյանց: Դրանք վաղնջական արվեստի եւ գեղանկարչության ինքնատիպ վավերագրեր են՝ սփռված ողջ Հայկական լեռնաշխարհով մեկ:

Շարունակելի

**Յակոբ ՍԻՄՈՆՅԱՆ**
*Պատմական գիտ. թեկնածու, արվեստաբանության դոցենտ*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ Գ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ

**(1113-1166)**



Սկիզբը՝ էջ 4

Յավանաբար հայոց կաթողիկոսը երբեմն-երբեմն օգտագործեց այդ գավազանը, սակայն այն սովորական կիրառություն չստացավ: Մ. Օրմանյանի կարծիքով՝ հայրապետական քողը թերեւս եղել է պալլիումը, որը եմիփորոնի նմանություն ուներ եւ ոչ թե քողի: Ցավոք, այս խնդիրը ճշտել հնարավոր չէ, քանի որ լատին հեղինակներն ընծաների մասին ոչինչ չեն հայտնում: Պապի նամակը ստացվեց 1143 թվին, եւ Գրիգոր կաթողիկոսը նույնպես սիրո գիր ուղարկեց՝ ընծաների հետ միասին, որոնք Յռոմ տարավ հատուկ պատվիրակությունը: Սակայն ո՛չ ընծաների, ո՛չ նամակի եւ ո՛չ էլ պատվիրակության մասին տեղեկություններ չեն պահպանվել: Ասվում է միայն, որ պատվիրակության ուղեւորությունը տեւել է մեկուկես տարի: Զգձգվելու պատճառը թերեւս այն է, որ 1144-ին Ինոկենտիոս Բ-ն մահացել էր, իսկ նրա հաջորդ Լուկիոս Բ պապը, մերժվելով Յռոմի բնակիչներից, փորձել էր ուժով գրավել Յռոմը, սակայն սպանվել էր, եւ 1145-ին պապ էր ընտրվել Եվգենեոս Գ Բեռնարդ Կլարավալլեցին, որը նույնպես մերժվելով Յռոմի բնակիչներից՝ փախել էր Իտալիայի Վիտերբիո քաղաքը, որտեղ հայ պատվիրակները հանդիպել էին նրան:

1307 թ. Սսի ժողովի առնչությամբ ասվում է, որ իրենց ասածները գրված են եղել Յռոմի պապ Եվգենիոսին ուղղված նամակում, որ ուղարկել էին Յռոմ Գրիգոր կաթողիկոսը եւ նրա եղբայր Ներսես Կլայեցին: Սակայն այդ նամակի ո՛չ հայերեն եւ ո՛չ էլ լատիներեն օրինակները չեն պահպանվել, ուստի դժվար է գաղափար կազմել հայ-լատինական առաջին բանակցությունների մասին: Վավերականը միայն այն է, որ համաձայն Օթոն Ֆրայզինգցու՝ նա 1145 թվին Վիտերբիո քաղաքում է եղել, երբ հայ պատվիրակները գտնվում էին այնտեղ: Ըստ նրա պատմածների՝ հայերը, Ծնունդն ու Յայտնությունը միասին տոնելուց զատ, պատարագում են խմորուն հացով եւ անջուր բաժակով: Եվ որ նրանք Յռոմ են եկել ուսանելու ըստ նրանց սովորության պատարագի կերպը, իսկ պապն էլ, սովորեցնելու նպատակով, նրանց ներկայությամբ մեծ պատարագի հանդես է կատարել եւ փոքր պատարագն էլ՝ ծածուկ: Ասված է նաեւ, որ հայերին շրջապատող ոչ քրիստոնյա ազգերն իրենց գարշահոտ տղաներին լողացնում են հայոց մկրտության ավազանում, եւ հոտն անցնում է, որից հետո նրանք կրկին վերադառնում են իրենց պիղծ սովորությանը: Ասվում է նաեւ, որ հայոց պատվիրակությունը եկել էր պարզելու, թե հայերը մի՞թե պարտավոր են մկրտել այդպիսի երեխաներին: Եթե սրանց շուրջն է եղել պատվիրակության ուղեւորության նպատակը, ապա Մ. Օրմանյանը ցավ է հայտնում Գրիգոր կաթողիկոսի եւ Ներսես եպիսկոպոսի տգիտության եւ ապիկարության համար, որ հիշյալ կետերը պարզելու համար մեկուկես տարով պատվիրակություն էին ուղարկել Յռոմ: Սակայն, շարունակելով իր միտքը, Մ. Օրմանյանը գրում է, որ Գրիգորի պատվիրակները կամեցել են ավելի շուտ ձեռք առնել Օթոնին եւ նրան ընկերակցող լատին եպիսկոպոսներին ու զվարճանալ: Նրա եզրակացությունը միանշանակ է: Գրիգորի պատվիրակներն ամեն կերպ փորձել են ձեռք բերել պապի համակրանքը, որ նրա ձեռքով կարողանան վերականգնել հայկական իշխանությունը, իսկ կրոնական խնդիրներից խուսափել են՝ մեջտեղ բերելով կարեւորություն չներկայացնող կետեր:

Պատվիրակության ձեռք բերած արդյունքների մասին ոչինչ հայտնի չէ: Ինքը՝ Եվգենիոսը, հալածական կացության մեջ էր, ուստի դժվար է ասել՝ հայերը Եվգենիոսից օգնություն ստացան թե ոչ, պապը հայոց կաթողիկոսին նամակ ուղարկեց թե ոչ, եւ երբ ետ վերադարձավ պատվիրակությունը: Մեր պատմիչներն այդ մասին լռում են, իսկ արտաքինները ոչինչ չեն հայտնում արդյունքների մասին: Այն հավանաբար առանձին օգուտ չի տվել: Ասենք, որ անկախ ամեն ինչից՝ Կիլիկիայում վիճակը փոխվել էր, եւ Յռոմից օգնություն ստանալու հարցն օրակարգից դուրս էր եկել:

Լեւոն Ռուբինյանը բյուզանդացիների կողմից գերեվարվել էր իր Թորոս եւ Ռուբեն տղաների հետ միասին, իսկ Ստեփանեն եւ Մլեհը փրկվել էին գերեվարվելուց՝ գտնվելով Եդեսիայում եւ հյուրընկալվելով կոմս Ժոսլինի եւ նրա կնոջ մոտ, որը նրանց հորաքույրն էր: Մի պահ Յովհաննես կայսրը Լեւոնին ազատեց եւ պալատ ճաշի հրավիրեց, սակայն շարժելով կայսեր նախանձը՝ նա կուրացվեց եւ կրկին իր զավակների հետ բանտարկվեց: 1143-ին Լեւոնը մահացավ բանտում, իսկ Թորոսը, բանտից ազատ արձակվելով, պատվավոր դիրքի հասավ արքունիքում:

Շարունակելի

**Բաբկեն ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*



# Քրիստոնեական ընտանիքը հասարակության հիմքն է

*«Ժողովուրդները եւ ազգերը միայն հացով չեն ապրիր. բազաւորութեամբ եւ ազատութեամբ չեն բարձրանար, այլ առաւել բարոյական կեանքով. եւ այդ կենսական կեանք տուողը ընտանիքն է»:*

***Խրիմյան Հայրիկ***

«Ընտանիքը հասարկության բնական եւ հիմնական բջիջն է» (ՀՀ Սահմ. հոդված 35), իսկ պետությունն ընդամենը մեծ ընտանիք է: Իսկ ի՞նչ է քրիստոնեական ընտանիքը, եւ ինչպիսի՞ն այն պետք է լինի:

Ընտանիքը սիրո բույն է, որն սկսում են հյուսել տղամարդն ու կինը՝ ամուսնությունից հետո: Իհարկե, ամուսնության բուն օրենքը սերն է: Հետաքրքիր է, որ գրական մեծ ստեղծագործություններում սերը գրեթե միշտ դրամատիկ բնույթ է կրում. սերը ապրում եւ հավերժանում է այն ժամանակ, երբ մեռնում են հերոսները, եւ թվում է, թե ճշմարիտ սերը վեր է այս աշխարհից, չի կարող իրական լինել: Սակայն, սերը քրիստոնեության հիմքն է, առանցքը, եւ եթե ուզում ենք կառուցել քրիստոնեական ընտանիք ու հասարակություն, ապա այն չի կարող լինել առանց քրիստոնեական կատարյալ սիրո:

Այսօր բոլորը խոսում են կնոջ եւ տղամարդու հավասարության մասին՝ ընդդեմ «կնոջ հնազանդության եւ տղամարդու՝ տեր լինելու»: Արդյո՞ք այս երկու երեւույթները հակասում են իրար: Պողոս առաքյալը Կորնթացիներին հղած թղթում ասում է. «Եվ այսուհետեւ չկա խտրականություն ոչ արուի եւ ոչ էգի միջեւ, քանզի դուք բոլորդ մի եք ի Հիսուս Քրիստոս»: Ըստ էության՝ քրիստոնեական վարդապետությամբ դրվեց կնոջ եւ տղամարդու հավասարության գաղափարը, սակայն այստեղ կա մի կարեւոր հանգամանք. նրանք հավասար են Աստծո առջեւ: Մյուս կողմից, Ս. Գիրքը հորդորում է. «Կանա՛յք, հնազա՛նդ եղեք ձեր մարդկանց, ինչպես որ վայել է ի Տեր» (Կող. Գ 18): Սակայն այս հնազանդությունը այնպիսին չէ, ինչպիսին ծառայի կամ հպատակի հնազանդությունը, որովհետեւ ընտանիքում պետք է լինի միայն սեր, խնամք եւ միություն: «Եւ ինչպէ՞ս կարելի է, որ այր մարդ բռնակալ լինի կնոջ վերայ, չարաչար ճնշէ ու նվաճէ իր կեանքն եւ իր ընկերը, երբ տիրապես ճանչնայ, թէ կինը բարոյապէս իր մարմին, իր սիրտ եւ ոգին է» (Խրիմյան Հայրիկ): Խնդրի ողջ դժվարությունն էլ հենց այն է, որ տղամարդիկ կարողանան դուրս գալ «արեւելյան, տեր





լինելու գաղափարից» եւ փորձեն «քրիստոնեաբար տեր լինել», իսկ կանայք էլ հասկանան, որ հնազանդությունն ամենեւին էլ ստրկություն կամ ծառայություն չէ: Այս երկուսի ներդաշնակ կիրառումից է ծնվում լիարժեք հավասարությունը կնոջ եւ տղամարդու միջեւ: Կանանց հնազանդության հորդոր տալուց հետո Պողոս առաքյալն ասում է. «Մարդի՛կ, սիրեցեք ձեր կանանց եւ մի դառնացրեք նրանց» (Կող. Գ 19):

Ս. Գրքում տղամարդու եւ կնոջ հարաբերությունը համեմատվում է Քրիստոսի եւ Եկեղեցու հարաբերության հետ. «Մարդն է գլուխը կնոջ, ինչպես որ Քրիստոսը գլուխն է եկեղեցու.... Եվ ինչպես եկեղեցին հնազանդվում է Քրիստոսին, նույնպես եւ կանայք թող հնազանդվեն իրենց մարդկանց.... Մարդի՛կ, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոսը սիրեց եկեղեցին եւ իր անձը մատնեց նրա համար» (Եփես. Ե 23-25): Այսինքն՝ կինը, հնազանդ լինելով ամուսնուն, ինչպես Եկեղեցին՝ Քրիստոսին, հայտնում է իր խնամվելու, սիրվելու պատրաստակամությունը, իսկ ամուսինը, իր հերթին ընդունելով կնոջ հնազանդությունը, պարտավորվում է սիրել ու խնամել նրան, ինչպես Քրիստոսը՝ Եկեղեցուն, հանուն որի տվեց նույնիսկ Իր կյանքը: Չե՞ք կարծում, որ այսպես սիրելն ավելի դժվար է, քան հնազանդ լինելը: Եվ կարո՞ղ է լինել սրանից ավելի մեծ հավասարություն: Սակայն սա չի նշանակում, որ կինը պետք է միայն հնազանդ լինելով մեծարվի ու սիրվի, քանզի Ս. Գիրքն ասում է. «Իսկ եթե մեկը յուրայիններին եւ մանավանդ ընտանիքին խնամք չի տանում, հավատն ուրացել է եւ ավելի չար է, քան անհավատը» (Ա Տիմ. Ե 8): Սա վերաբերում է թե՛ տղամարդուն, թե՛ կնոջը եւ նույնիսկ երեխաներին: Ընտանեկան կյանքում որքան էլ փորձենք հավասարեցնել կնոջն ու տղամարդուն, այնուամենայնիվ, նրանք տարբեր են՝ ըստ բնության, որովհետեւ հանդես են գալիս մեկը որպես հայր, մյուսը՝ որպես մայր: Սա ամենեւին էլ խտրականություն չէ, այլ բնական տարբերություն, քանզի հենց կինն է արժանացել մայրության մեծագույն շնորհին, իսկ տղամարդը չունի այդ «բնական օծումը» Աստծո կողմից: Եվ ճիշտ է նկատում Գարեգին Ա երջանկահիշատակ կաթողիկոսը, թե՝ «Մոր դերը վճռորոշ է կնոջ համար, եւ խոսել նրա ընկերային ազատագրության մասին՝ հաշվի չառնելով այդ, նշանակում է դավաճանել նրա կանացի բնությանն ու բուն կոչումին»:

Այսպիսով, ամուսնու՝ տեր, եւ կնոջ՝ հնազանդ լինելը դրախտային ընտանիքի բանալին է եւ լիակատար հավասարության եւ ներդաշնակ կյանքի հիմքը: Իհարկե, ընտանեկան կյանքում կան նաեւ նյութական բազում խնդիրներ, եւ ոմանք թյուր կարծիք ունեն, թե հենց այս խնդիրն է ընտանիքներում վեճերի ու դժբախտության պատճառ դառնում: Ցավոք, նյութի հանդեպ մարդկանց ցանկությունները անսահման են, եւ մարդը շատ հաճախ դառնում է դրա ստրուկը: Այսպես նա է սկսում ծառայել մամոնային, եւ ոչ թե մամոնան՝ մարդուն: Իհարկե, ձգտելը վատ բան չէ, բայց կարելիների եւ անհրաժեշտության շրջանակներում՝ հույժ կարեւորելով այն ամենը, ինչն Աստված շնորհել է իրեն: Մեզ շրջապատող խնդիրներն արդեն այնքան շատ են, որ չարժե ավելի ծանրաբեռնվել: Շատ հեշտ է անընդհատ խոսել այս կյանքի դժվարությունների ու բշվառության մասին, սակայն մեծ կարողություն ու ջանք է պահանջվում «մթության մեջ մի շող գտնելու եւ դրանով մեր երկրային դրախտը, որն առաջին հերթին ընտանիքն է, լուսավորելու համար»:

Եփեսացիներին հղած թղթում Պողոս առաքյալն ասում է. «Որդինե՛ր, հնազա՛նդ եղեք ձեր ծնողներին ի Տեր, որովհետեւ դա է ճիշտը» (Եփես. Զ 1), «Հայրե՛ր, մի՛ զայրացրեք ձեր որդիներին, այլ մեծացրեք նրանց Տիրոջ խրատով եւ ուսումով» (Եփես. Զ 4):

Այսօր բոլորն էլ ուզում են կառուցել ժողովրդավարական հասարակություն, բայց մոռանում են, որ տունը պետք է կառուցել ոչ թե տանիքից, այլ հիմքից, ուստի սկսել պետք է ոչ թե երկրի քաղաքացիներից, այլ յուրաքանչյուրը՝ իր ընտանիքից: Մի պահ պատկերացրեք, թե ձեր ընտանիքը մի պետություն է. արդյո՞ք մայրերն ու որդիները հնազանդ են, իսկ հայրերը ոչ միայն տեր են, այլեւ չեն զայրացնում իրենց որդիներին եւ մեծացնում են նրանց Տիրոջ խրատով ու ուսումով: Անշուշտ, Տիրոջ պատգամով ապրելը հեշտ չէ, բայց ո՛չ անհնարին: Պետք է մշտապես հիշել, որ Աստված Սեր է, եւ Նա այդ անսահման սիրուց ոչ միայն կյանք պարգեւեց, այլեւ Իր պատկերը շնորհեց մարդուն՝ նրան Իր որդեգիրը դարձնելով: Եվ մարդն էլ պարտավոր է ապրել՝ մեծ պատվիրանը իր կյանքի եւ իր ընտանիքի ուղենիշ դարձնելով. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով եւ քո ամբողջ հոգով եւ քո ամբողջ զորությամբ եւ քո ամբողջ մտքով եւ պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Ղուկ. Ժ 27):

***Արմինե ՄԵԼՔՈՆՅԱՆ***

---

**ՄԱՐԻՆԱ ՄԱԼԱՇԿԻՆԱ**

# Ի՞նչ ընդհանրություն կա մարդու հոգեկանի եւ պոլտերգեյստի միջեւ

*Սկիզբը՝ էջ 2*

Փորձենք քննարկել 6-րդ վարկածը (այլմոլորակայինների ներգործությունը): Ի՞նչ ուժերով են ներգործում նրանք: Դիմենք ֆիզիկոսներին: Նրանք կասեն, որ դրանք կարող են տեղի ունենալ միայն գլյուոնների (գլյուոնները տարրական մասնիկներ են, ինչպես նեյրոնները, պրոտոնները, էլեկտրոնները) ուժեղ շղթաների միջոցով: Իսկ գլյուոնների շղթաները կարող են տեղաշարժվել ցանկացած նյութի միջով, այդ թվում նույնիսկ մութ անցքերի: Եթե ենթադրենք, որ այսպես կոչված «այլմոլորակայինները» կարող են կառավարել գլյուոնների շղթաները, ապա նրանք կարող են նաեւ առաջ բերել պոլտերգեյստի երեւույթը: Ճիշտ է՝ այդպիսի «այլմոլորակայինների» գլխուղեղը պետք է գերուղեղ լինի՝ գերազդեցությամբ եւ զուգահեռաբար գործող հզոր խողովակներով: Բնականաբար հարց է ծագում, թե նման «գերմարդու» ինչի՞ն է պետք զբաղվել հիմարությամբ՝ էլեկտրական խցաններ հանելով...

Պոլտերգեյստը աշխարհագրական եւ պատմական սահմաններ չի ճանաչում: Այսպես, 1870 թ. Ուրալի շրջանում ռուս կալվածատեր Վասիլի Շապովն իր կալվածքում հանդիպեց պոլտերգեյստի երեւույթին: 1891 թ. Կուրսկի նահանգի գյուղերից մեկում գեղջուկ Պաշկովի վառարանի աղյուսներն իրենք իրենց կոտրվում եւ դուրս էին թռչում: Դա տեղի էր ունենում ցերեկվա ժամերին՝ քահանայի եւ ժողովրդի ներկայությամբ: 1951 թ. Մանիլում ոստիկանական պարեկախումբը ձերբակալեց մի աղջկա, որը փողոցում ճչում ու լաց էր լինում՝ ասելով, որ իր վրա ինչ-որ արարած է հարձակվել: Նրա ձեռքերի վրա ատամների հետքեր կային: Երբ աղջկան, որպես հասարակական կարգը խախտողի, տեղափոխեցին առանձին խուց, նա շարունակում էր գոռգոռալ: Բժիշկ կանչվեց, եւ նա աղջկա մարմնի վրա հայտնաբերեց ատամների նոր հետքեր, եւ այն էլ այն մասերում, ուր աղջիկն ինքը անկարող էր դիպչել: Ոստիկանության պետն ու քաղաքապետը ժամանեցին դեպքի վայր: Բազմաթիվ վկաներ հետեւում էին, թե ինչպես են աղջկա վրա ատամների նորանոր հետքեր երեւում...

Պոլտերգեյստն անտինոմիական ֆենոմենների կարգին պատկանող հետաքրքիր երեւույթ է: Անտինոմիան հակադրությունն է, այսինքն՝ պոլտերգեյստի հատկությունները հակասում են մեկը մյուսին: Գիտության մեջ անտինոմիան կիրառվում է այնպիսի երեւույթների նկարագրության մեջ, որոնք գտնվում են ամենօրյա փորձառությունից դուրս: Առայժմ պոլտերգեյստը միայն այս ձեւով կարելի է բացատրել...

Այսպիսով՝ ընդհանրացնենք մեր գիտելիքները պոլտերգեյստի մասին. պոլտերգեյստը զուրկ է տրամաբանությունից ու իմաստից, անբացատրելի է ֆիզիկայի տեսանկյունից: Պոլտերգեյստի միջոցով տեղաշարժվող առարկաների ջերմաստիճանը շատ կարճ ժամանակահատվածում բարձրանում է եւ անմիջապես էլ իջնում: Հոգեւորականների կողմից օգտագործվող «սուրբ ջուրն» այդ երեւույթը կարող է բոլորովին վերացնել կամ հակառակը՝ սաստկացնել: Ա. Ս. Պուշկինն իր օրագրում այսպես է գրել. «Քաղաքում շատ է խոսվում այն մասին, որ պալատական ծիանոցի գերատեսչությանը պատկանող տներից մեկում տարօրինակ երեւույթներ են տեղի ունենում. կահույքը շարժվում ու խաղում է: Բանը հասել է ղեկավարությանը: Կ. Վ. Դոլգորուկովը հետաքննության է տվել: Չինովնիկներից մեկը քահանա կանչեց, բայց աղոթքի ժամանակ աթոռներն ու սեղանները չէին ցանկանում անշարժ կանգնել: Սրա մասին զանազան մեկնություններ են լսվում»:

Պոլտերգեյստի հուրը կարող է մարդուն խիստ այրել կամ էլ՝ ոչնչով չվնասել: Այդ ֆենոմենը շատ հաճախ (դեպքերի 80-90 տոկոսը) տեղի է ունենում անչափահաս երեխայի առկայությամբ, սակայն լինում են նաեւ այլ հանգամանքներ: Ընդհանուր առմամբ բավական է, որ գիտնականներն ամրագրեն պոլտերգեյստի առանձնահատկությունները, երբ անմիջապես ի հայտ է գալիս հակառակ ենթադրությունը: Մի՞թե նույնը տեղի չի ունենում հոգեկան երեւույթների ժամանակ, որոնք նույնպես անտինոմիական են: Բավական է, որ որեւէ հոգեբան ստիմուլի եւ ռեակցիայի, մտքերի ու թեսթերի, նեյրոնների եւ նրանց բուժման միջեւ կապ հայտնաբերի, նույն պահին մարդն այլ վարք, մտքեր ու զանազան հիվանդություններ է ի հայտ բերում: Մարդու հոգեկանն ավելի բարդ է, քան կարծում են ժամանակակից գիտնականները: Մեր աշխարհի իրողություններն ավելի բարդ ու ընդարձակ են, քան մենք ենք պատկերացնում: Մնում է՝ ինքներս մեզ հարց տանք, թե ինչո՞ւ ենք ջանում ամեն ինչ բացահայտել եւ չենք սիրում անորոշությունը: Ա. Գորրովսկին իր «Այլ Աշխարհներ» գրքում գրում է. «Միայն կապիկն է իր տեսադաշտում հայտնված յուրաքանչյուր առարկա փորձում ատամներով ջարդել, հոտոտել կամ էլ համտեսել»: Այո՛, մեզ հեշտ է զանազան վարկածներ հորինել՝ չհասկանալով, որ գոյություն ունի նաեւ անքննելին: Արդյոք դա չէ՞ պատճառը, որ մարդ հենց գիտակից դարձավ, սկսեց այն ուսումնասիրել. սկզբում պարահոգեբանական մեթոդներով, հետո էլ՝ հոգեբանական: Հնարավոր է, որ մարդը հաշտվի այն մտքի հետ, որ հոգեկանում միշտ էլ կլինեն ինչ-որ չպարզաբանված գաղտնիքներ:



***(«Հոգեբանության հանրամատչելի պատմություն» գրքից)***

***Թարգմանությունը՝***

***Կարեն դպիր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ***

